

# ՄՐՑՈՒՅԹ-3

Երեք ուսանողներ՝ հինգերորդ կուրսեցին, երրորդ կուրսեցին և առաջին կուրսեցին միասին ապրում են հանրակացարանում և շատ են սիրում մասնակցել ծրագրավորման մրցույթների ACM-ի կանոններով: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր յուրովի մոտեցումը խնդիրների լուծմանը: Հինգերորդ կուրսեցին բոլոր խնդիրները լուծում է հերթականությամբ՝ սկզբից առաջինը, հետո երկրորդը և այսպես մինչև վերջ: Երրորդ կուրսեցին խնդիրները լուծում է լրիվ հակառակ հերթականությամբ՝ սկսելով վերջինից: Իսկ առաջին կուրսեցին սկզբում լուծում է ամենապարզ խնդիրը, հետո մնացածներից ամենապարզը և այսպես հասնում է ամենաբարդ խնդրին: Խնդրի բարդությունը որոշվում է այն ժամանակով, որն անհրաժեշտ է խնդիրը լուծելու համար: Միևնույն խնդիրը լուծելու համար երեք ուսանողներն էլ ծախսում են միևնույն ժամանակը:

Ձեր խնդիրն է պարզել, թե ո՞ր ուսանողը կհաղթի մրցույթում: Հիշեցնենք, որ ACM-ի կանոններով հաղթում է այն մասնակիցը, որը 300 թույլների ընթացքում լուծում է առավելագույն թվով խնդիրներ, հավասար խնդիրներ լուծելու դեպքում ավելի քիչ տուգանային միավոր ունեցողը:

Ուսանողները շատ լավ ծրագրավորողներ են և խնդիրների լուծման ժամանակ սխալ փորձեր չեն կատարում: Այդ իսկ պատճառով տուգանային միավորը հավասար է մրցույթի սկզբից մինչև խնդրի լուծման պահը եղած ժամանակին՝ հաշված թույլներով: Եթե տուգանային միավորները ևս համընկնում են, ապա հաղթում է ավելի ցածր կուրսում սովորողը:

## Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողում տրված է խնդիրների  $N$  ( $N \leq 10$ ) քանակը: Երկրորդ տողում տրված են  $N$  բնական թվեր՝ յուրաքանչյուր խնդրի լուծման համար անհրաժեշտ ժամանակը: Խնդրի լուծման ժամանակը չի գերազանցում 300 թույլներ:

## Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում պետք է արտածել 1, եթե հաղթել է առաջին կուրսեցին, 2՝ երրորդ կուրսեցուն և 3՝ հինգերորդ կուրսեցուն դեպքում:

## Օրինակներ՝

N	stdin	stdout
1	3 40 30 60	1